# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


1897 (առ ընթերցողս) . . . 1
Մովսէս Խորենացի և Լա-Կրոզ . 5
Խորհրդածութիւնք Եղիշէի վերայ. Դ. Եղիշէ ունէ՞ր օտար աղբիւր . 9
Դիցաբանութիւն Հայոց. — Նախաբան. 16
Հենրիկ Գելցերի, Հետազօտութիւն Հայ դիցաբանութեան . . . 18
Առ խմբագրապետ Բազմավէպ Հանդիսի. Թուղթ բարեկամի . . 22
Ուղևորութիւն ի Հայս . . . 25
Մուրատեան համալսարանական վարժարան ի Պադուա, և բացումն ուսումնական տարեշրջանի . 29
Վեստեան կոյս. — Պատմական վէպ եկեղեցւոյ առաջին դարու . . 32
Լուսանկար երկնից ըստ Կ. Ֆլամարիոնի . . . . . 36
Օդային նաւագնացութիւն . . 40
Աշխարհիս վերջը . . . . 40
Բացատրութիւն մի Մար Աբասայ գիւտի մասին . . . . 42
ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ԲԱԶՄԱՎԷՊԻ
1. Աշխարհաբարի և գրաբարի խնդիրը . . . . . 45
2. Տառադարձութիւն . . . 46
3. Թատրոն . . . . 46
4. Եղիշէի անձևացեալ օրինակն . 46
Անդրադարձութիւնք . . . . 47
Պարունակութիւն ազգային պարբերական թերթից . . . . 48


## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՊԷՅՐՈՒԹ, Ա. Վ. Ա. — Ըստ Ձեր փափաքանաց՝ Բազմավէպի այս տարուան թերթերը յաջորդաբար կ'ընդունիք Ձեր առաջարկած պայմանաց համեմատ, միայն խնդրենք որ փութով հաճէիք առ մեզ յղել անդորրագիրը:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, Մ. Եղ. — Ընդունեցէք մեր անկեղծ շնորհակալութիւնը, նկատմամբ մեր խնդրած հաւաքման, զոր սկսած էք ընել ամենայն ազնուութեամբ:

ՎԱՌՆԱ, Մ. Յ. Կ. — Ձեր դիտութեան համար՝ ինչպէս որ գրած էիք՝ ըստ այնմ բաժանորդաց ընկալագիրները առ Ձեզ յղեցինք, սակայն տակաւին ոչ մի լուր չառինք. արդեօք առացա՞ք զայնս՝ թէ ոչ. Ձեր պատասխանին կ'սպասենք՝ ըստ օրինի կարգադրելու համար այս տարուան առ Ձեզ ղրկելիք թերթերը:

ՈՍՏՈՒՐԳԵԹ, Ա. Կ. — Բազմավէպի բաժանորդագինը արդէն առած ենք, ուստի այդ մասին կրնաք ապահով ըլլալ:

ԱՐԴՈՒԻՆ, Օ. Է. — Շնորհակալութեամբ ստացանք մեզի ղրկուած ստորագրութիւնքը. դրուած պայմանաց համեմատ յանձնարարութիւնքը կը կատարուին:

Ա. Գ. և այլք. — Բազմավէպի պրակները անոնց միայն կը ղրկուին՝ որոնք արդէն իսկ ըստ օրինի կանխիկ վճարած են իրենց տարեկան բաժանորդագինը:

ՏՓՂԻՍ, Ք. Ա. (Հ. Բ. Ը.). — Արդէն իսկ բաւական թուով Ազգային ընթերցարաններ մինչև ցայժմ ձրիաբար կ'ընդունին մեր թերթերը, բայց որովհետև այդ թերթերը նոյնպէս ձրիաբար չեն տպագրուիր՝ հետևաբար անշուշտ ծանր կը գար՝ նոր բացուած ընթերցարանաց, որոց ստիպուած ենք ժխտողական պատասխան տալ:

Ա — Ք. — Կը խնդրուի ազգային պարբերական (կիսամեայ, ամսօրեայ և կիսամսեայ) թերթից Յարգոյ հրատարակիչներէն, որ հաճին որչափ որ կարելի է փութացնել իրենց թերթից առաքումն:

digitised by A.R.A.R.@